ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2024 թվականի №--Ա

«ՍՏԱՐԼԻՆԿ ԷՅԷՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-ին հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169-Ն որոշումը և հաշվի առնելով «ՍՏԱՐԼԻՆԿ ԷՅԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 6-ի հայտը, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի դեկտեմբերի 6-ի №01/11.1/10197-2024 և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2024 թվականի դեկտեմբերի 9-ի №9/3-384 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ՍՏԱՐԼԻՆԿ ԷՅԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Հայաստանի Հանրապետության տարածքում արբանյակային կապի գլոբալ համակարգերով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակ-ցության ցանցի կազմակերպման համար տրամադրել երկրորդական հիմունքներով 14,0-14,5ԳՀց և 10,7-12,7ԳՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականություն-ների տիրույթների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի ---ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՍՏԱՐԼԻՆԿ ԷՅԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետության տարածքում արբանյակային կապի

գլոբալ համակարգերով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կազմակերպման համար տրամադրվող երկրորդական հիմունքներով 14,0-14,5ԳՀց և 10,7-12,7ԳՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ՍՏԱՐԼԻՆԿ ԷՅԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի --ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք.Երևան
-- -------- 2024թ.